


Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

**«ԱԳՐՈՏԵԽ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն**

31 դեկտեմբերի 2019թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, Երևան 0012

Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964

Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC

8/1 Vagharshyan Str.

0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964

F + 374 10 260 961

«ԱԳՐՈՏԵՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱԳՐՈՏԵՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի*» (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի

հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի

կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

Տնօրեն

10 փետրվարի 2020թ.



Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<i>Ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	215,272	191,568
Ոչ նյութական ակտիվներ		220	298
Հետաձգված հարկային ակտիվներ	5	2,141	582
		<u>217,633</u>	<u>192,448</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	6	485,550	791,151
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	249,697	201,031
Ընթացիկ շահութահարիկ գծով ակտիվներ		-	7,858
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	95,525	26,876
		<u>830,772</u>	<u>1,026,916</u>
		<u>1,048,405</u>	<u>1,219,364</u>
Ընդամենը ակտիվներ			

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուսպներ	9		
Կանոնադրական կապիտալ		70,000	45,000
Կուտակված շահույթ		99,742	45,278
		<u>169,742</u>	<u>90,278</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	10	230,946	478,359
		<u>230,946</u>	<u>478,359</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	171,426	477,657
Վարկեր և փոխառություններ	10	467,240	173,070
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		9,051	-
		<u>647,717</u>	<u>650,727</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>1,048,405</u>	<u>1,219,364</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. փետրվարի 10-ին:

Խաչատրյան Նաիրա

Տնօրեն



Անժելա Դարբինյան

Էն ընդ Քեյ Կոնսալթինգ ՍՊԸ-ի տնօրենի
տեղակալ (լիազորված անձ)

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական
հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից
ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Հասույթ	12	2,313,438	1,442,996
Վաճառքի ինքնարժեք		(1,987,987)	(1,234,269)
Համախառն շահույթ		325,451	208,727
Այլ եկամուտ		4,923	8,433
Իրացման ծախսեր	13	(13,217)	(15,686)
Վարչական ծախսեր	14	(125,357)	(82,550)
Այլ ծախսեր		(8,209)	(13,077)
Գործառնական գործունեությունից շահույթ		183,591	105,847
Ֆինանսական ծախսեր	15	(97,502)	(63,532)
Այլ ֆինանսական արդյունքներ	16	9,584	1,242
Շահույթ մինչև հարկերը		95,673	43,557
Շահութահարկի գծով ծախս	17	(16,209)	(10,586)
Տարվա շահույթ		79,464	32,971
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		79,464	32,971

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնա- դրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	45,000	12,307	57,307
Տարվա շահույթ	-	32,971	32,971
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	32,971	32,971
Կանոնադրական կապիտալի համալրում	-	-	-
Շահաբաժիններ	-	-	-
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,000	45,278	90,278
Տարվա շահույթ	-	79,464	79,464
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	79,464	79,464
Կանոնադրական կապիտալի համալրում	25,000	(25,000)	-
Գործարքներ սեփականատերերի հետ	25,000	(25,000)	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	70,000	99,742	169,742

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս
ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված
կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	79,464	32,971
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,259	553
Շահութահարկի գծով ծախս	16,209	10,586
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի շարժ	1,809	-
Տոկոսային ծախս (տե՛ս ծանոթագրություն 24)	97,502	63,532
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(9,584)	(1,242)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	186,659	106,400
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(50,475)	(150,199)
Պաշարների փոփոխություն	305,601	(364,665)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(308,792)	281,190
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	132,993	(127,274)
Վճարված տոկոսներ (տե՛ս ծանոթագրություն 24)	(88,378)	(35,136)
Վճարված շահութահարկ	(859)	(40,462)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	43,756	(202,872)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(24,885)	(162,597)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(24,885)	(162,597)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր (տե՛ս ծանոթագրություն 24)	597,301	440,453
Վարկերի և փոխառությունների մարում (տե՛ս ծանոթագրություն 24)	(547,574)	(65,706)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	49,727	374,747
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	68,598	9,278
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	51	(530)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	26,876	18,128
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	95,525	26,876

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: